Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29-ի N 340 -Ա որոշման

# Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

## «ԽԱՐԻՍԽ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. «Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամը, կարևորելով ազգային մշակույթի և երիտասարդության առանձնահատուկ դերը մեր ժողովրդի կյանքում, նախատեսում է Երևան քաղաքում հիմնել երիտասարդական, ազգային, մշակութային կենտրոն:

2. «Խարիսխ» համահայկական, մշակութային բարեգործական հիմնադրամը նախատեսում է իրականացնել ներդրումային ծրագիր, որի նպատակը ժամանակակից, միջազգային չափանիշներին համապատասխան, հանրապետությունում նմանատիպը չունեցող բազմաֆունկցիոնալ կենտրոն ստեղծելն է:

3. Նշված կենտրոնը կներառի գրասենյակային տարածքներ, կոնֆերանս դահլիճներ, ցուցասրահներ, գրադարաններ, թանգարան, մարզադահլիճ, լողավազան և սրճարան:

4. Նոր կենտրոնը կնպաստի հանրապետությունում երիտասարդական ազգային մշակութային կյանքի աշխուժացմանը, ավանդույթների պահպանմանն ու փոխանցմանը հաջորդ սերունդներին, ինչպես նաև առողջ ապրելակերպի ձևավորմանը:

5. Կենտրոնի ընդհանուր մակերեսը կկազմի՝ շուրջ 20000 քառ. մետր:

6. Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 3 տարի:

7. Ծրագրի արժեքը՝ շուրջ 22 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:

8. Շինարարության ավարտից հետո կստեղծվի 80 աշխատատեղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
մարտի 29 -ի N 340 - Ա որոշման

Ս Խ Ե Մ Ա
«ԽԱՐԻՍԽ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ՕՏԱՐՎՈՂ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐԱԿԻՑ 1,1 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

18_0340